ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/20 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2013թ-ի դեկտեմբերի 23-ին կնքված ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/20-1 պայմանագրում 2014թ-ի փետրվարի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ապրանքը մատակարարվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով 03.02.2014թ. կնքվել է համաձայանագիր: Միաժամանակ ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 25.12.2014թ.

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

Համաձայնագիր-1
23.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/20-1 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

«03» փետրվարի 2014թ.

ք. Երևան

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Գևորգյանի մի կողմից, և «Բլից Մեդիա» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Դավթյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/20-1 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 9.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Կողմերը որոշեցին Պայմանագրի 9.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2.Պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը սահմանել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3. Սահմանել, որ Գնորդը պայմանագրի թիվ-1 հավելվածով նախատեսված իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.4.Կողմերը որոշեցին 23.12.13թ. կնքված N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/20-1 գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2014 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, յուրաքանչյուր օրինակն ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Բլից Մեդիա» ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7	ք. Երևան, Պուշկինի 15
ՀՎՀՀ 02591206	ՀՎՀՀ 02554494
[illegible]013	Հ/Հ 2050022042741001
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գևորգյան	«Բլից Մեդիա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա.Դավթյան

Հավելված
Հաստատված է
«23» դեկտեմբերի 2013թ. կնքված
N ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-13-1-11/20-1
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Լրատվամիջոցների ձեռքբերում	4234	73600	147200	220800	294400	368000	441600	515200	588800	662400	736000	883200	883200

* Վճարվող գումարները ներկայացված են ածողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Ք.Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՎՀՀ 02591206

Հ/Հ 900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Գևորգյան

ՎԱՃԱՌՈՂ
«Բլից Մեդիա» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 15

ՀՎՀՀ 02554494

Հ/Հ 2050022042741001

«Ինեկոբանկ» ՓԲԸ

«Բլից Մեդիա» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Դավթյան